ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Հայկուհի Արտեմի Խաչատրյանը Նաիրի համայնքի Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 07-065-0304-0035 կադաստրային ծածկագրի 0,08001 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա փոխադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-295 դրական եզրակացությունը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է փոփոխել հողամասի նպատակային նշանակությունը և արտացոլել այն Քասախ գյուղի գլխավոր հատակագծում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Հայկուհի Արտեմի Խաչատրյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեում ենթադրում է 5373312 դրամ եկամուտների ավելացում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան